ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊՐՆ. Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ


ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Մերի [illegible]

ՀԱՍՑԵ Մհեր Մկրտչյան 38ա շ. բն. 12

ՀԵՌ. 094114406


# ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ամուսնուս՝ Արմեն Սամվելի [illegible] ավտոմեքենայի գույքահարկը զիջել, քանի որ ամուսինս [illegible] վերքով [illegible] է [illegible] [illegible] պատերազմի ընթացքում:

20. 07 2021 թ.
( օր, ամիս, տարի)


ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 20.07 2021
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 13111


Դիմող՝ [signature]
(ստորագրություն)

Մերի [illegible]
(անուն, ազգանուն)

Քաղաքացիական գործ թիվ **<u>ՇԴ/0586/02/21</u>**

**Վ Ճ Ի Ռ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան)

| | |
|---|---|
| *նախագահությամբ դատավոր* | *Ա. Մարոյանի* |
| *քարտուղարությամբ* | *Ա. Հակոբյանի* |
| *մասնակցությամբ՝* | |
| *դիմողի ներկայացուցիչ* | *Ս. Դավթյանի* |

2021 թվականի ապրիլի 22-ին (ք. Գյումրի)

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ դիմումի Մերի Գրիգորի Եղոյանի (ՀՀ քաղաքացու անձանգիր՝ AM 0802652, տրված 11.07.2012 թվականին, 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, տնակ 225/299, փաստացի բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մ. Մկրտչյան փողոց, 38Ա շենք, բնակարան 12)՝ անձին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**<u>1. Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

Մերի Գրիգորի Եղոյանը դիմում է ներկայացրել Դատարան ամուսնուն՝ Արմեն Սամվելի Ղազարյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Դիմումը Դատարանում մուտքագրվել է 04.02.2021 թվականին:

Դատարանի 11.02.2021 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ: Նույն որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ: Միաժամանակ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում հրապարակվել է հաղորդագրություն:

Դատարանը, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի պահանջներից, անհայտ բացակայողի գտնվելու վայրի մասին տեղեկություններ ստանալու նպատակով հարցումներ է կատարել անձի վերջին հայտնի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմիններին, ոստիկանության և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին և ստացել է հարցումների պատասխանները:

Դատարանը 18.03.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստի արձանագրային որոշմամբ կայացրել է ապացուցման պարտականության բաշխելու մասին որոշում:

Դատարանը, 15.04.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստին, գործը համարելով դատաքննությանը նախապատրաստված, գործի քննությունը շարունակել է դատաքննության փուլով: Գործի դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 21.04.2021 թվականին:

21.04.2021 թվականին նշանակված դատական նիստին, գործի քննությունը համարելով ավարտված, Դատարանը 2021 թվականի ապրիլի 22-ը հայտարարել է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

**2. Դիմողի փաստարկները և իրավական դիրքորոշումը.**

Դիմելով Դատարան՝ Դիմումատուն հայտնել է, որ Արմեն Սամվելի Ղազարյանը հանդիսանում է իր ամուսինը /հիմք՝ ԱԱ N 102745 ամուսնության վկայական/: Համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Նարե Արմենի Ղազարյան՝ ծնված 21.01.2003 թվականին և Նարեկ Արմենի Ղազարյան՝ ծնված 19.06.2005 թվականին: Ամուսինը՝ Արմեն Սամվելի Ղազարյանը, աշխատել է ՀՀ Ոստիկանությունում, եղել է ոստիկանության փոխգնդապետ: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծած ռազմական գործողությունների ժամանակ իր ամուսինը նույն օրը ոստիկանության զորքի հետ մեկնել է ռազմաճակատ: Վերջին անգամ ամուսնու հետ խոսել է 2020 թվականի հոկտեմբերի 04-ին և մինչև հիմա վերջինիս մասին լուր չունի:

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից 21.01.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ «24.06.1975 թվականին ծնված ոստիկանության փոխգնդապետ Արմեն Սամվելի Ղազարյանը ՀՀ ՊՆ N ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչության միջոցով իրեն տրամադրված անվանացուցակների համաձայն վերջինիս գտնվելու վայրը համարվում է անհայտ»: Հայտնել է նաև, որ արդեն չորս ամիս է տեղեկություն չունի իր ամուսնուց:

Դիմումատուն հայտնել է, որ անհրաժեշտ է Արմեն Սամվելի Ղազարյանին դատական կարգով ճանաչել անհայտ բացակայող՝ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին:

Դիմողը նշել է նաև, որ իր ամուսինը մեկնել է ռազմաճակատ ոստիկանության զորքի հետ, ոստիկանության ամբողջ զորքը պայթյունի հետևանքով զոհվել է, այդ թվում նաև իր ամուսինը, շատ քչերն են վերադարձել ռազմաճակատից, իսկ ամուսնու անունը զոհվածների անվանացուցակում չի եղել, ռազմաճակատից չի վերադարձել:

Ամուսնուն անհայտ բացակայող ճանաչելու դեպքում ինքը կկարողանա օգտվել պետական աջակցություններից:

Վերոգրյալից ելնելով և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 257-րդ հոդվածը, դիմումատուն Դատարանից խնդրել է ամուսնուն Արմեն Սամվելի Ղազարյանին, ծնված՝ 24.06.1975 թվականին, ճանաչել անհայտ բացակայող:

Դիմողի ներկայացուցիչը դիմումում նշված փաստական հանգամանքների հիմնավորմամբ պնդել է պահանջը:

**3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր.**

1) ՀՀ ԱՆ Շիրակի մարզի Մարալիկի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 13.01.2003 թվականին տրված թիվ ԱԱ № 102745 ամուսնության վկայականի համաձայն՝ Արմեն Սամվելի Ղազարյանը և Մերի Գրիգորի Եղոյանը ամուսնացել են, որի մասին ամուսնության վերաբերյալ ակտերի գրանցման գրքում 13.01.2003 թվականին կատարվել է թիվ 02 գրանցումը: Ամուսնությունից հետո ամուսինները կրել են այրը՝ «Ղազարյան», կինը՝ «Եղոյան» ազգանունները:

2) 27.01.2003 թվականին տրված թիվ ԱԱ № 364776 ծննդյան վկայականի համաձայն՝ Նարե Արմենի Ղազարյանը ծնվել է 21.01.2003 թվականին, ծնողներն են՝ հայրը՝ Արմեն Սամվելի Ղազարյանը, մայրը՝ Մերի Գրիգորի Եղոյանը:

3) 20.06.2005 թվականին տրված ԱԱ № 061015 ծննդյան վկայականի համաձայն՝ Նարեկ Արմենի Ղազարյանը ծնվել է 19.06.2005 թվականին, ծնողներն են՝ հայրը՝ Արմեն Սամվելի Ղազարյանը, մայրը՝ Մերի Գրիգորի Եղոյանը:

4) Հայաստանի Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Թումանյանի և Զորահավաքային բաժանմունքի պետ Ա. Խաչատրյանի կողմից 21.01.2021 թվականին տրված թիվ №-3/384 տեղեկանքի համաձայն՝ ՀՀ ՊՆ N 1114-Լ հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահի կողմից և ՀՀ ՊՆ ԶԱՄՊ և ՎՀ գլխավոր վարչության միջոցով իրենց տրամադրված անվանացուցակներում Արմեն Սամվելի Ղազարյանի գտնվելու վայրը համարվում է անհայտ:

5) 15.03.2021 թվականին Գյումրի քաղաքի «Գյումրի Կենտրոն» համատիրության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմեն Սամվելի Ղազարյանը /ծնված՝ 1975թ./ հաշվառված է ք. Գյումրի, տնակ 225/299 հասցեում, սակայն ըստ հարևանների գրավոր հայտարարության, 2007 թվականից փաստացի բնակվում է ք. Գյումրի, Մ. Մկրտչյան 38Ա շենք, բնակարան 12 հասցեում: Ընտանիքի կազմն է՝ Եղոյան Մերի Գրիգորի /ծնված՝ 1981թ./, Ղազարյան Նարե Արմենի /ծնված՝ 2003թ./ և Ղազարյան Նարեկ Արմենի/ծնված՝ 2005թ./:

6) Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 11.02.2021 թվականի գրությամբ (Դատարան մուտքագրվել է 26.02.2021 թվականին) հայտնվել է, որ Արմեն Սամվելի Ղազարյանի վերջին հայտնի բնակության վայրի մասին տեղեկություն համայնքապետարանը չունի:

6) Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի 22.03.2021 թվականի թիվ Ե-333 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 05.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի արխիվում Արմեն Սամվելի Ղազարյանի /ծնված՝ 24.06.1975 թ./ մահվան ակտային գրանցում չի հայտնաբերվել: Ստուգվել է 21.11.2012-23.03.2021թթ.:

7) Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի 15.04.2021 թվականի N 68/4-2831 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 15.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրի քաղաքի 225/299 տնակում հաշվառված Արմեն Սամվելի Ղազարյանը (ծնված՝ 24.06.1975 թվականին) ընտանիքի անդամների հետ միասին 2001 թվականից մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը փաստացի բնակվել է Գյումրի քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 38Ա շենք 12 բնակարանում: Ուստի հնարավոր չի եղել այլ տեղեկություններ ստանալ վերջինիս վերաբերյալ: Կից Դատարան է ներկայացվել ոստիկանության տեսուչ Մ. Մանասյանի կողմից 14.04.2021 թվականին կազմված արձանագրության պատճենը, համաձայն որի՝ այց է կատարվել նշված տարածք և իր հարցմանը բնակիչները հայտնել են, որ Արմեն Ղազարյանը 2001 թվականից ընտանիքի հետ միասին փաստացի բնակվել է Գյումրի քաղաքի Մ.

Մկրտչյան 38Ա շենք, բն. 12 հասցեում: Այլ տեղեկություն հնարավոր չի եղել պարզել վերջինիս վերաբերյալ:

8) Դատարանի հարցման ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի 16.04.2021 թվականի թիվ 69/4-2824 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 16.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոցի 12 բնակարանի բնակիչ Արմեն Սամվելի Ղազարյանը ծնված՝ 24.06.1975 թվականին, բացակայում է բնակության վայրից և ըստ հարևանների տեղեկատվության՝ իրենք ճանաչել են Արմեն Ղազարյանին որպես հարևան, ով եղել է ոստիկանության ծառայող, մեկնել է Արցախյան երկրորդ պատերազմին և չի վերադարձել: Իսկ վերջինիս փաստացի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն չունեն: Կից Դատարան է ներկայացվել ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ԴՌԲ տեսուչ՝ ոստիկանության կապիտան՝ Ս. Մուրադյանի կողմից կազմված արձանագրության պատճենը, համաձայն որի՝ իրենց կողմից այց է կատարվել ք. Գյումրի Մի. Մկրտչյան փողոց, 38 շենք, թիվ 12 հասցե և պարզել են, որ Արմեն Սամվելի Ղազարյանը փաստացի բնակվել է վերը նշված հասցեում: Ըստ հարևանների հայտնած տեղեկատվության՝ Արմեն Սամվելի Ղազարյանը մեկնել է ռազմաճակատ և չի վերադարձել, այլ տեղեկություններ հնարավոր չի եղել պարզել:

9) Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին հաղորդագրության հրապարակումից հետո Արմեն Սամվելի Ղազարյանի (ծնված՝ 24.06.1975 թվականին, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, 225/299 տնակ) գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տվյալ Դատարանում չի ստացել:

## 4. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Դատարանը, լսելով դիմումատուի ներկայացուցչին, գործում եղած յուրաքանչյուր ապացույց գնահատելով դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գտնում է, որ դիմումը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները» վերտառությամբ 14-րդ հոդվածի 13-րդ կետը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է օրենքով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը վերտառությամբ» 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը:

Վերը նշված նյութական իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացու բնակության վայրից տևական ժամանակով բացակայելու հետևանքով առաջացած իրավական անորոշությունը վերացնելու, քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն ու շահերը համակողմանի պաշտպանելու նպատակով օրենսդիրը նախատեսել է քաղաքացուն անհայտ բացակա ճանաչելու հնարավորություն:

Օրենսդիրը անհայտ բացակայող ճանաչելու հարցում տարբերակել է երկու իրավական ռեժիմ, այն է՝

1. Դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին,

2. Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին:

Ընդ որում, անհայտ բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը որոշելու անհնարինության դեպքում անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այն ամսին հաջորդող ամսվա մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկը:

Վերոգրյալից հետևում է, որ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին դատական ակտը Դատարանը կայացնում է հատուկ վարույթի կարգով՝ գնահատելով այն բոլոր փաստերը, որոնք օրինական դատական ակտ կայացնելու հիմք կարող են ծառայել, մասնավորապես՝ բացակայության մշտական լինելը, անհայտ բացակայության պատճառները, անհայտ բացակայող ճանաչելու նպատակը, նրա գտնվելու վայրի մասին տեղեկությունների բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորն անհայտ բացակայողի գտնվելու վայրի մասին տեղեկություններ ստանալու նպատակով հարցում է անում բացակայողի վերջին հայտնի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմիններին, հայտնի վերջին գործատուին, ոստիկանության և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում հաղորդագրություն է հրապարակում քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ԱՐՄԱՆ ՍԱՐՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցի տեսակներն են՝

1) վկայի ցուցմունքը.

2) գրավոր ապացույցները.

3) իրեղեն ապացույցները.

4)լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները.

5) փորձագետի եզրակացությունը.

6) մասնագետի բացատրությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա և ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով, դատարանը որոշում է գործի լուծման համար նշանակություն ունեցող և ապացուցման ենթկա փաստերի շրջանակը:

Նշված փաստերի հաստատման՝ ապացույցներ ներկայացնելու ծանրությունը, հատուկ նորմերի բացակայության դեպքում, դրվում է դիմող կողմի վրա, ով իր կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձանց իրավունքների առնչությամբ դիմել է դատական պաշտպանության:

Ընդ որում, գործին լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը կարող են հաստատվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված ապացույցների տեսակներով, որոնց հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը կարող է պարզել գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

Ըստ սույն գործի փաստական տվյալների՝ ՀՀ ԱՆ Շիրակի մարզի Մարալիկի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 13.01.2003 թվականին տրված թիվ ԱԱ № 102745 ամուսնության վկայականի համաձայն՝ Արմեն Սամվելի Ղազարյանը և Մերի Գրիգորի Եղոյանը ամուսնացել են, որի մասին ամուսնության վերաբերյալ ակտերի գրանցման գրքում 13.01.2003 թվականին կատարվել է թիվ 02 գրանցումը: Ամուսնությունից հետո ամուսինները կրել են այրը՝ «Ղազարյան», կինը՝ «Եղոյան» ազգանունները:

27.01.2003 թվականին տրված թիվ ԱԱ № 364776 ծննդյան վկայականի համաձայն՝ Նարե Արմենի Ղազարյանը ծնվել է 21.01.2003 թվականին, ծնողներն են՝ հայրը՝ Արմեն Սամվելի Ղազարյանը, մայրը՝ Մերի Գրիգորի Եղոյանը:

20.06.2005 թվականին տրված ԱԱ № 061015 ծննդյան վկայականի համաձայն՝ Նարեկ Արմենի Ղազարյանը ծնվել է 19.06.2005 թվականին, ծնողներն են՝ հայրը՝ Արմեն Սամվելի Ղազարյանը, մայրը՝ Մերի Գրիգորի Եղոյանը:

Հայաստանի Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Ա. Թումանյանի և Զորահավաքային բաժանմունքի պետ Ա. Խաչատրյանի կողմից 21.01.2021 թվականին տրված թիվ №-3/384 տեղեկանքի համաձայն՝ ՀՀ ՊՆ N 1114-Լ հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահի կողմից և ՀՀ ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչության միջոցով իրենց տրամադրված անվանացուցակներում Արմեն Սամվելի Ղազարյանի գտնվելու վայրը համարվում է անհայտ:

15.03.2021 թվականին Գյումրի քաղաքի «Գյումրի Կենտրոն» համատիրության կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմեն Սամվելի Ղազարյանը /ծնված՝ 1975թ./ հաշվառված է ք. Գյումրի, տնակ 225/299 հասցեում, սակայն ըստ հարևանների գրավոր հայտարարության, 2007 թվականից փաստացի բնակվում է ք. Գյումրի, Մի. Մկրտչյան 38Ա շենք, բնակարան 12 հասցեում: Ընտանիքի կազմն է՝ Եղոյան Մերի Գրիգորի /ծնված՝ 1981թ./, Ղազարյան Նարե Արմենի /ծնված՝ 2003թ./ և Ղազարյան Նարեկ Արմենի/ծնված՝ 2005թ./:

Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 11.02.2021 թվականի գրությամբ (Դատարան մուտքագրվել է 26.02.2021 թվականին) հայտնվել է, որ Արմեն Սամվելի Ղազարյանի վերջին հայտնի բնակության վայրի մասին տեղեկություն համայնքապետարանը չունի:

Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի պետի 22.03.2021 թվականի թիվ Ե-333 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 05.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրու ՔԿԱԳ տարածքային բաժնի արխիվում Արմեն Սամվելի Ղազարյանի /ծնված՝ 24.06.1975 թ./ մահվան ակտային գրանցում չի հայտնաբերվել: Ստուգվել է 21.11.2012-23.03.2021թթ.:

Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի 15.04.2021 թվականի N 68/4-2831 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 15.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրի քաղաքի 225/299 տնակում հաշվառված Արմեն Սամվելի Ղազարյանը (ծնված՝ 24.06.1975 թվականին) ընտանիքի անդամների հետ միասին 2001 թվականից մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը փաստացի բնակվել է Գյումրի քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 38Ա շենք 12 բնակարանում: Ուստի հնարավոր չի եղել այլ տեղեկություններ ստանալ վերջինիս վերաբերյալ: Կից Դատարան է ներկայացվել ոստիկանության տեսուչ Մ. Մանասյանի կողմից 14.04.2021 թվականին կազմված արձանագրության պատճենը, համաձայն որի՝ այց է կատարվել նշված տարածք և իր հարցմանը բնակիչները հայտնել են, որ Արմեն Ղազարյանը 2001 թվականից ընտանիքի հետ միասին փաստացի բնակվել է Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան 38Ա շենք, բն. 12 հասցեում: Այլ տեղեկություն հնարավոր չի եղել պարզել վերջինիս վերաբերյալ:

Դատարանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի 16.04.2021 թվականի թիվ 69/4-2824 գրությամբ (Դատարան մուտքագրվել է 16.04.2021 թվականին) հայտնվել է, որ Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոցի 12 բնակարանի բնակիչ Արմեն Սամվելի Ղազարյանը ծնված՝ 24.06.1975 թվականին, բացակայում է բնակության վայրից և ըստ հարևանների տեղեկատվության՝ իրենք ճանաչել են Արմեն Ղազարյանին որպես հարևան, ով եղել է ոստիկանության ծառայող, մեկնել է Արցախյան երկրորդ պատերազմին և չի վերադարձել: Իսկ վերջինիս փաստացի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն չունեն: Կից Դատարան է ներկայացվել ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ԴՈՒԲ տեսուչ՝ ոստիկանության կապիտան՝ Ս. Մուրադյանի կողմից կազմված արձանագրության պատճենը, համաձայն որի՝ իրենց կողմից այց է կատարվել ք. Գյումրի Մի. Մկրտչյան փողոց, 38 շենք, թիվ 12 հասցե և պարզել են, որ Արմեն Սամվելի Ղազարյանը փաստացի բնակվել է վերը նշված հասցեում: Ըստ հարևանների հայտնած տեղեկատվության՝ Արմեն Սամվելի Ղազարյանը մեկնել է ռազմաճակատ և չի վերադարձել, այլ տեղեկություններ հնարավոր չի եղել պարզել:

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին հաղորդագրության հրապարակումից հետո Արմեն Սամվելի Ղազարյանի /ծնված՝ 24.06.1975

թվականին, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, 225/299 տնակ) գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տվյալ Դատարանում չի ստացել:

Դատարանը, չխախտելով ապացույցների ներկայացման, հավաքման, ուսումնասիրման և գնահատման կարգը՝ ինչպես նաև պահպանելով դրանց վերաբերելիությունը, թույլատրելիությունը, հավաստիությունը և, իհարկե, բավարար լինելը, փաստում է, որ Դիմողի պահանջի իրավաչափությունը հաստատվում է գործով ներկայացված վերը նշված ապացույցներով, համաձայն որոնց՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանի Հանրապետության զինված ստորաբաժանումների կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսվել է ռազմական գործողություններ, ընդ որում, նշված փաստը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրահայտ փաստ է և ապացուցման կարիք չունի:

Դատարանը միաժամանակ հաստատված է համարում, որ Արմեն Սամվելի Ղազարյանը ծառայել է ՀՀ ոստիկանության զորքերում և Ադրբեջանի Հանրապետության զինված ստորաբաժանումների կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսած ռազմական գործողությունների օրը մեկնել է ռազմաճակատ: Դատարանը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ վերջին անգամ նրա հետ հեռախոսազրույց է ունեցել կինը՝ 04.10.2020 թվականին, իսկ դրանից հետո նրա գտնվելու վայրն անհայտ է, և տեղեկություններ չկան վերջինիս վերաբերյալ:

Դատարանի կողմից հարցումների միջոցով ձեռնարկված միջոցների արդյունքում Արմեն Սամվելի Ղազարյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ տեղեկություններ նույնպես ձեռք չեն բերվել, ուստի ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածի պահանջներից, Դատարանը գտնում է, որ Արմեն Սամվելի Ղազարյանին պետք է ճանաչել անհայտ բացակայող:

Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ղազարյանի վերաբերյալ վերջին տեղեկությունները ստացվել են 04.10.2020 թվականին, ուստի Դատարանը գտնում է, որ անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբը պետք է համարել 2020 թվականի հոկտեմբերի 5-ը՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Ինչ վերաբերում է դիմողի շահագրգռվածության փաստին և դիմողի համար ակնկալվող իրավական հետևանքներին, ապա Դատարանն արձանագրում է, որ ՀՀ ԱՆ Շիրակի մարզի Մարալիկի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 13.01.2003 թվականին տրված ԱԱ № 102745 ամուսնության վկայականի համաձայն՝ Արմեն Սամվելի Ղազարյանը և Մերի Գրիգորի Եղոյանը ամուսիններ են, իսկ Արմեն Ղազարյանին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում դիմումատուն կարող է օգտվել Պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերից:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով դիմումատուի ներկայացուցիչ Սեդա Դավթյանի միջնորդությանը՝ դատարանի վճռին հրապարակման պահից օրինական ուժ տալու վերաբերյալ, Դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ 9-րդ հոդվածի համաձայն վճիռը բացառիկ դեպքերում կարող է հրապարակման պահից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ գործին մասնակցող անձի համար:

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ

Ներկայացված միջնորդությամբ Սեդա Դավթյանը հայտնել է, որ որպես բացառիկ դեպք պետք է դատարանի վճռին հրապարակման պահից օրինական ուժ տալ, քանի որ այն բխում է դիմողի շահերից:

Հաշվի առնելով իրավահարաբերության բնույթը, դիմումատուի համար ակնկալվող իրավական հետևանքները, Դատարանը գտնում է, որ սույն վճիռը հրապարակման պահից պետք է հայտարարել օրինական ուժի մեջ մտած:

**5. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ վարույթներով, ինչպես նաև սույն օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ այլ դիմումների համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի եռապատիկի չափով:

Վերը նշված իրավադրույթների լույսի ներքո Դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, որոնք գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, սակայն նշված կանոնից օրենսդրի կողմից արվել է նաև բացառություն, մասնավորապես՝ հատուկ վարույթներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:

Տվյալ դեպքում, Դիմումատուն նախապես վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ գործի քննության հետ կապված այլ ծախսերը բացակայում են, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 179-րդ, 188-192-րդ, 198-րդ, 235-236-րդ, 256-258-րդ, 360-362-րդ հոդվածներով՝ Դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

**1.** Դիմումը բավարարել.

Արմեն Սամվելի Ղազարյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AN 0269498, տրված՝

21.11.2012 թվականին, 016-ի կողմից, ծնված՝ 24.06.1975 թվականին, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, ք. Գյումրի, 225/299 տնակ) 2020 թվականի հոկտեմբերի 05-ից ճանաչել անհայտ բացակայող:

**2.** Պետական տուրքի հարցը համարել լուծված:

**3.** Սույն վճիռը հիմք է համապատասխան մարմինների կողմից վերը նշված փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ ծագած իրավունքները ձևակերպելու համար:

**4.** Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այն կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԱՐՈՅԱՆ

Ծանոթություն: Վճիռը չի բողոքարկվել և 22.04.2021 թ.-ին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԱՐՈՅԱՆ

ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Քաղաքացի Նարեկ
(անունը

Արմենի Շահպարյան -
հայրանունը, ազգանունը) ազգությունը

ծնվել է 2005 թ. հունվարի «19»-ին ՀՀ Շիրակի մարզ
(մարզ

Ախուրյան
քաղաք, գյուղական համայնք)

որի մասին ծննդյան վերաբերյալ ակտերի գրանցման գրքում

2005 թ. հունվարի «20»-ին կատարվել է № 766 գրանցումը

Ծնողները

Հայրը Արմեն
(անունը

Սամվելի Շահպարյան
հայրանունը, ազգանունը)

Ազգությունը հայ

Մայրը Մերի
(անունը

Գրիգորի Եղոյան
հայրանունը, ազգանունը)

Ազգությունը հայ

Ծնունդը գրանցվել է Գյումրու ՔԿԱԳ
(քաղաքացիական կացության ակտերի

[illegible] Ախուրյանի բաժին
գրանցման մարմնի անվանումը)

Վկայականը տրվել է 2005 թ. հունվարի «20»-ին

Կ.Տ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ
ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՄ № 061015

# ԾՆՆԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Քաղաքացի Նարե
(անունը)

Վրժենի Ղազարյան
(հայրանունը, ազգանունը)

Ծնվել է 2003թ. «հունվարի 21»-ին ՀՀ ք. Գյումրի,
(քաղաքը)

Երկու հազար երեք թ.
(շրջանը, գյուղը)

որի մասին ծննդյան վերաբերյալ ակտերի գրանցման գրքում 2003 թ. «հունվարի 27»-ին կատարվել է № 151 գրանցումը։

**Ծնողները**

Հայրը Վրժեն
(անունը)

Սամվելի Ղազարյան
(հայրանունը, ազգանունը)

Ազգությունը հայ

Մայրը Սերի
(անունը)

Գրիգորի Եղոյան
(հայրանունը, ազգանունը)

Ազգությունը հայ

Ծնունդը գրանցվել է ՀՀ ԱՆ Շիրակի
(քաղաքացիական կացության ակտերի

ՔԿԱԳ Գյումրու բաժին
գրանցման մարմնի անվանումը)

Վկայականը տրվել է 2003թ. «հունվարի 27»-ին

Կ.Տ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ [signature]

ԱԱ № 364776

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA ID CARD



Ազգանուն/Surname

ԵՂՈՅԱՆ

YEGHOYAN

Անուն/Name

ՄԵՐԻ

MERI

Հայրանուն/Patronymic name

ԳՐԻԳՈՐԻ

Սեռ/Sex

Ի/F

Քաղաքացիություն/Citizenship

ՀՀ/ARM

Ծնվել է/Date of birth

05.01.1981

Նույնականացման քարտի համարը/Identity card number

009771650

Վավերական է մինչև/Date of expiry

10.12.2027

Քաղաքացու ստորագրությունը/Signature of holder

Ծննդավայրը/Place of birth
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA

Բնակության վայրը/Place of residence
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA

Տրված է/Date of issue
10.12.2017

Ում կողմից/Issuing authority
022

Հանրային ծառայությունների համարանիշը/Social services number
5501810786

Ազգությունը/Nationality
ՀԱՅ
ARMENIAN

Արյան խումբը և ռեզուսը/Blood type and rhesus

I<ARM0097716507<<<<<<<<<<<<<<<
8101051F2712103ARM<<<<<<<<<<<8
YEGHOYAN<<MERI<<<<<<<<<<<<<<<<